

№ 2 XXVIII ՓԵՏՐՎԱՐ XXVIII 1910 Թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ծրիզրիխ Շօպէն	Պատկեր
Լուսիկի դնդակը (պատկերով)	Օր. Ն. Ս.
Տաւտամ Զատի	Կարապետ Բալեան
Գիւղական իդիլիա	Պատկեր
Ոչտարդ Գալօ	Գ. ք. Մկրտումեան
Ծերուկ Ֆըլիցը, թարգմ.	Զ. Տ.-Դ.
Իւ օր էլ մթնաց.	Ց. Աղաբաբ
Նախապատմականների խորհրդակցութիւն	Պատկեր
Պատուհասի առաջ (պատկերով)	Յ. Սօլօվեան
Դամոկլեան սուրը	Լևոն Մանուէլեան
Ֆր. Շօպէն	Վ. Ղորղանեան

ՄԱՆԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

Փետուար	Պատկեր
Այսպէս անկարելի է	Ամբիկ
Անի	Լևոն Տէր-Յակովբեան
Անի. Մայր եկեղեցի	Պատկեր
Մարդու կեանքը	Յովհ. Կարապետեան
Բախտ	Համբ. Մազմանեան
Հսկայ	Պատկեր
Մեր թղթակիցները (Շուշուց)	Աւօ
Նամակ խմբագրին	Ռուբէն
Պատարիզ. Հանելուկ. Մեր երեխաներին.	
Նաւատոմ շուն	Պատկեր
ԱՂԲԻՒՐԻ պատասխանները	

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

XXXV ՅՕԲԵԼԵԱՆ XXXV

ԳԱԲՐԻԷԼ ՂՈՒԿԻՔԵԻԹՅԵՆՑԻ

Առաջիկայ մարտի 14-ին Շուշում տօնելու է Ղարաբաղի թեմական դպրանոցի ուսուցիչ ԳԱԲՐԻԷԼ ՂՈՒԿԻՔԵԻԹՅԵՆՑԻ մանկավարժական գործունէութեան 35-ամեակը։

Կազմուած է դպրանոցի հոգաբարձութիւնից, ուսուցիչներից և քաղաքացիներից յօբելեանական յանձնաժողով՝ բեղմնաւոր ուսուցչին մատուցանելու յարգանք և երախտադիտական զգացումներ։

Նրանք, որոնք կամենում են մասնակցել բազմերախտ ուսուցչի այդ տօնախմբութեան, հրաւիրւում են յայտնել իրանց ցանկութիւնը Յօբելեանական Յանձնաժողովին։

Շնորհաւորական գրութիւններ, ընծաներ ուղարկել Ղարաբաղի թեմական դպրանոցի տեսչի հասցով։

XXVIII ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԳԻՐ XXVIII

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԵՒ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Քսանուվեցերորդ տարի *1910* *№ 2.* *Փետրուար*

Խմբագիր-հրատարակիչ՝ Տիգրան Նազարեան՝



ՑՐԻԴՐԻԽ ՇՕՊԷՆ

ԼՈՒՍԻԿԻ ԳՆԴԱԿԸ

Փոքրիկ Բիւրեղիկը հեռուից նկատելով իրա ընկերուհի Լուսիկին, որ տխուր ու տրտում լճակին էր նայում, մօտ գնաց և կարեկցութեամբ հարցրեց.

—Ինչո՞ւ ես այդպէս տխուր, Լուսիկ ջան, և ի՞նչ ես այդպէս երկար նայում լճակին։

—Գնդակս մէջն ընկաւ,—պատասխանեց Լուսիկը լացակումած։

Բիւրեղիկը նայեց պատնէշի արանքից և տեսաւ մի շատ սիրուն կարմրագոյն գնդակ, որ տարուբերուում էր լճակի կապտագոյն ալիքներում։

—Ա՛խ, ախտա՛ս, ախտա՛ս իմ գնդակ,—բացականչեց Լուսիկն ու հեկեկաց... Մայրիկիս ի՞նչ պիտի ասեմ։

Իսկ գնդակը շարունակում էր տարուբերուել ջրի վրայ։ Փոքրիկ չարաճճի ալիքները կարծես խաղում, զւարճանում էին նրանով։

Նոյն միջոցին կարապների երկու ընտանիք՝ սորոր տալով շրջում էին ջրի երեսին։ Նրանք հէնց որ տեսան կարմիր գնդակը, կար-

Հոսիկը կոացած լճակի վրայ, գլխարկով կաժհնում է ջոնել իր գնդակը

ծեցին ուտելու բան է: Եւ երբ լողալով հասան գնդակին ու մայր-կարապները կըտցահարեցին, գնդակն իսկոյն սուզուեց ջրի տակը, բայց մէկ էլ յանկարծ որ ջրի երեսն արաւ ու սկսեց ապար-ապար անել, փոքրիկ կարապները այնպէս վախեցան, որ աղմուկ բարձրացրած՝ դէս ու դէն փախան:

Այդ տեսարանը, որ կրկնուեց մի քանի անգամ, այնքան հետաքրքիր էր և զարճալի, որ Լուսիկը բոլորովին մոռացաւ իրա տըխրութիւնն էլ, երկիւղն էլ:

Եւ ամեն անգամ, երբ մեծ կարապների կտցահարելուց գնդակը ջրի տակն էր սուզում ու նորից ջրի երեսը դուրս գալով՝ փոքրիկ կարապներին վախեցնում ու դէսուդէն խռկում, Բիւրեղիկն ու Լուսիկը ուրախանում էին ու փառ-փառ ծիծաղում:

Ջրանց. բարգ. օր. Ն. Ս.

ՏԱԻԱՐԱԾ ՉԱՏԻ

Արշալոյս է. փոքրիկ տաս տարեկան տաւարած Չատին օջաղի կրակի դիմաց նստած՝ կաթնափոփի էր ուտում։ Իսկ նրանից մի քայլ հեռու նրա Զալօ շունը իր բաժին հացի կտորները կերած վերջացրած՝ դունչը դրել էր մեկնած ջուխտ թաթերի վրայ ու աչքը գցել Չատի աչքին։ Չատին չէր մոռանում իր հաւատարիմ ընկերին և կաթնափոփից դդալ-դդալ գցում նրա առաջը։

—Կեր, քեզ մատաղ, Զալօ ջան։

Շունը ուտում էր, ապին թակում ու գլուխը շարժում։

—Վահ, Զալօ ջան, խէ՛ ես աղաչանք անում, ուզում ես լօխ քեզ տամ։

Ասաց ու ճաացած կաթնափոփին ալրանեց Զալօի առաջը։

Չատին պատրաստ է։ Մայրը նրա առաջն արաւ տաւարը, հաց ու ճոթ նրա բաժին ուտելիքն էլ համ դրաւ կողքից քաշ ընկած տոպրակում, համ իր պատուէրը տուաւ։

—Քեզ մատաղ, ա Չատ, հանդին տաւարը չը թողնես, ըիզունը բերելիս լաւ ականիր։

Չատին գլուխը համաձայնաբար շարժեց, մահակը ուսին դրաւ ու ընկաւ տաւարի ետևից։ Նրա ետևից ապին *ամակարած**) մէջքին դրած Զալօն, իսկ շան ետևից Ծաղիկ աչառն էր գնում։ Չատին Զալօ շնից աւելի Ծաղիկին էր սիրում, այն մոխրագոյն, զեղեցիկ աչառին, որի երկար ու կեռ եղջիւրները կարծես արծաթաջրած լինէին։ Նրա մահակը դեռ Ծաղիկի կաշուին չէր դիպել, իսկ դրա փոխարէն նա շատ համբոյրներ էր ստացել իր ոպիտակ, գանգուր ճակատին։ Նա Ծաղիկին դեռ երբէք իր առաջը չէր ածել, այլ միշտ թողնում էր ազատ, իսկ Ծաղիկն էլ սկի պատահած չէր, որ մի անգամ կամ փորձէը առաջ ընկնել, կամ նրան ճշտապէս չը հետևէր։

---

*) Գծած բրդի իրար փաթաթած կապոց։

Ու Զատի կեանքը ուրախ էր անցնում, գործն էլ շնորհիւ իրար սիրող Զատի, Զալօի ու Ծաղիկի՝ լաւ էր գնում։

Այդ օրն էլ տաւարը տարաւ դէպի Պարթաղը, արածակեց ու կանչեց.

—Ծաղիկ Ջան, հաց, հաց։

Ծաղիկը եօ ճնացած երեխի պէս վազեց ու կերաւ նրա մեկնած հացի կտորը, ապա վարժւած ամենօրեայ սովորութիւնից՝ խառնուեց տաւարին ու սկսեց նրանց պէս ախորժակով արածել, մէկ-մէկ իր փոքրիկ տիրոջը նայելով։

Զատին դարձաւ դէպի Զալօն.

—Զալօ, առ քո վայն էլ դու կեր։

Զալօն մօտեցաւ, փորի վրայ ընկաւ խոտի մէջ, կերաւ ու աչքը ձգեց իր տիրոջը, որ մատը թամբ տալով պատւիրեց.

—Զալօ, քեզ մատաղ, Ծաղիկի հաքին բաց չը թողես։

Զալօն հասկանալով տիրոջ ասածը, շուռ եկաւ, երեսը դէպի տաւարը՝ նստեց ու աչքը ձգեց Ծաղիկին։

Զատի բաժինը ճնաց մի հաց. նրանից էլ մի կտոր կտրեց ու կծոտելով վազեց դէպի Խաչի աղբիւրը, ուր ըսպասում էին նրա ընկերները, Սաքօն, Սհակը և ուրիշները։

* * *

Արդէն մթնաժոռ էր։ Զատին վազում է տաւարի մօտ, գտնում նրանց ու ապահով, որ Զալօն էլ Ծաղիկին կը բերի ետևից, ինքը կանչում.

—Արա, Սաքօ, ձեր Վարդիկը էսա ստեղ, արի տար։

Մի ւրդ կողմից լսւում էր.

—Ա՛ Սհակ, Սհակ, ձեր Նարգիսը ղէտն արի, տար...

Զատին տաւարի ետևից ճամպա ընկաւ կանչելով.

—Ջան, Ջան, տաւարս ական են, ական են, Ջան, Ջան...

Ու մահակը մթութեան մէջ պատահմնելով, ուրախ-ուրախ սկսեց թռչկոտալ ու նորից կանչեց.

—Դէ, Զալօ, Ծաղիկ, ես ճամպա ընկայ. Զալօ, Ծաղիկին բեր։

Գնաց, խառնուեց միւս տաւարածների հետ և տաւարը քշեց։ Բոլորովին մութն էր։ Ուրախ-ուրախ թռչկոտելով հասան մինչև ծակուտ քարի ձորը, ուր առուն քչքչալով՝ կուշտ անասուններին ջուր էր տալիս։

Զատի տաւարը ջուր խմած՝ անցել էր առուն. ինքն էլ մահակը առաւ մէջտեղը դէմ տուաւ, ցատկեց միւս կողմը ու ետ նայեց։

—Զալօ, Զալօ, Ծաղիկին ջուր տուր հետդ բեր, ես գնացի։

Բայց ետևում մթութեան մէջ այնպիսի ամայութիւն էր տիրում, որ Զատի սիրտը կասկած ընկաւ, չը լինի թէ Զալօն Ծաղիկի հետ հանդուրժ են մնացել։ Նա ցատկեց առաւ միւս կողմը, պտտեց շուրջը, ոչինչ չը կար։ «Վահ, ինչ եմ մտածում, դուցէ առաջ են անցել»։ Ու ենթադրելով, որ այս երեկոյ նրանց չէ տեսել, բարձրացաւ Ծակուտ քարի գլուխը։ Նրա ականջին դիպաւ գիւղը դիմող իր ընկերների ձայնը. երևում էր նոր ընկերի հետ են խօսում։

—Արա, ա Սաք, էդ ո՞ւմ հետ էք խօսում, հարցրեց Զատին։

—Բէդին ա Բէդին, իրանց ձին ջուր տալ ա բերել...

—Արա, ա Բէդ. հէ, ա Բէդ...

—Հէյ, հէյ...

—Արա, մեր Ծաղիկը բալամ տեսած ըլես տանը։

—Չէ, չէ, քմերն ասեց Զրաւարը շուտ բեր, շուտ...

—Ա. Բէդ, արա, Զալօն էլ չես տեսել...

—Չէ, չէ, տանը չեն է, տանը չեն։

Զատին երեսը դարձրեց դէպի հանդը, դիմեց այն ընդարձակ, լայնանիստ տարածութեանը, որին սարեր են դրկած, ու ճնշուած ձայնով կանչեց.

—Զալօ՜օ, Զալո հո՜...

Նա լսեց իր ոտքերի տակից դուրս եկող մի ձայն «հո՜օ՜օ...»։ Եւ առուն սկսեց աւելի սաստիկ քչքչալ ու

մուխը աւելի սաստկացաւ։ Իսկ Զատուն շրջապատող քարերը այդ ժամին կասես կենդանի շունչ կուլ տուողներ լինէին։ Զատին էլ մեղմացրեց, ապա բոլորովին խեղդեց շունչը կոկորդում։ Նրա ընկերների ձայնը տաւարի բառանչը իսպառ կորաւեց։ Նա մենակ էր։ Յիշեց իր Զալօին ու Ծաղիկին, որոնց հետ մենակ չէր զգալ իրան, նրանց հետ ոչ մի ահ ու սարսափ գոյութիւն չէր ունենալ իր համար, և ակամայից լացակումած բացականչեց.

—Ա՛խ Զալօ, Ծաղիկ, ո՞րտեղ էք։

Զատին զգուշութեամբ իջաւ քարից ու նստեց նրա տակ։ Գնալ տո՞ւն. կարծես նրա ականջին դիպաւ մօր ասելիքը.

—Ծաղիկը մորթեմ վրադ, ա Զատ...

Յեռ դառնալ, գտնե՞լ Ծաղիկին, բայց ո՞րտեղ գտնել, ով է իմանում ուր են, ու գայլերը... գայլերը... Գուցէ Ծաղիկն արդէն գայլերի ճանկումն է. բայց չէ, չէ, Զալօն, այդ՝ գայլին կոխող, խելօք, հաւատարիմ շունը չի թողնիլ։ Տէր Աստուած, եթէ Ծաղիկը մենակ լինի՞, ու Զատի միտն ընկաւ իր աչառի սուր, երկար եղջիւրները. արդեօք Ծաղիկը իրան կը պաշտպանի՞ իր պոզերով, թէ չէ. նա կը թողնի՞ որ գայլի հարամ կէտիքը իրա մսի մէջ մտնի. իհարկէ կը պաշտպանի։ Աստուած, կը պաշտպանի՞, թէ չէ։ Զալօն ու Ծաղիկը իրար հետ եօթանասուն գայլի էլ կը դիմանան։

Ու գայլի անունը յիշելով նա սարսռեց, զգալով որ ինքը մենակ է։ Նրա ականջին դիպաւ մի աւելի, չարագուշակ ձայն, քարերի միջից.—«բո՜ւ, բո՜ւ»։ Բայղուշն է։

«Բայղուշ դառնաս դու» ասաց, բայց ինքն էլ լսեց իր ձայնը։

Զատին կանդնեց ու քայլերը դէպի տուն ուղղեց. մի քանի քայլ—և տեղը մեխուեց։ Զատին առանց Ծաղիկի ո՞նց տո՞ւն գնայ. չէ, չէ, որ մեռնի, գայլի բաժին էլ որ դառնա՛յ... Բա նրա բերնով հաց կուլ կը գնա՞յ։ Նա նորից լսեց.—«Բո՜ւ, բո՜ւ»։ Եւ Զատին լացախառն մրմնջաց.

—Կռաւոցդ քեզ վրայ ընկնի, բայղուշ։

Բայղուշը բու է կանչում, Ծաղիկը հանդին ու գայլերը, գայլերը... ինքն էլ մենակ։ Վահ, ինչ եմ նատել, մտածեց Ջատին, նրանց հետ որ լինեմ, լաւ չեմ վախենում. մօտս շունչ, էն էլ Ծաղիկն ու Ջալօն կը լինեն։ Նա շուռ տւաւ ու երեսը դարձրեց դէպի ամայի մթութիւնը։ Բա ինչպէս գնալ. գայլերը որ վրայ տան։ Մնաց կանգնած, անելիքը չիմանալով. նրա ինքն իրան իջնող ձեռքը դիպաւ կողքից քաշ ընկած դանակին ու միտքը լուսաւորեց. բոլոր պատուհասների արգելքը գանւած էր։

—Ջալօ ջան, որտեղ որ ես, տեղդ կաց, եկայ հա... փսփսաց Նա։

Ջատին դանակը բաց ու խուփ անելով, ընչասպառ համ վազում էր, համ շրթունքներով միայն արտասանում.

Գիր անեմ, գելկապ անեմ,
Աչքերդ քարագիզի անեմ,
Ատամներդ մոմի անեմ,
Լեզուդ Թաղիքի անեմ.
Մէջքդ թելի անեմ,
Ոտներդ ծեղի անեմ,
Ականջներդ կուղ քաշեմ,
Կաշիդ տրեխ անեմ։

Նա վերջացնում էր, նորից սկսում և վազելով իր կողմից էլ միշտ աւելացնում—«Ո՛ւ հոգիդ հանեմ, Ջանդ վնարեմ»։

Արդէն տեղ հասաւ. անշուշտ այստեղ, այս մօտերքում կը լինեն։ Նա կանգնեց մի հողաթմբի, աչքերը մթութեան մէջ այս ու այն կողմ տարաւ, չիմանալով որ կողմ ուղղել ձայնը, ու կանչեց բարձր.

—Ջալօ, Ջալօ հօ...

Ու առանց ուշացնելու.

—Ծաղիկ, հայ, Ծաղիկ հայ, բիժ, բիժ, բիժ...

Ջատին լսեց հեռւից, շատ հեռւից, անշուշտ Ծակուռ

քարի գլխից, մի գիլ, զօրաւոր ու գորովալից ձայն, կարծես իր ձայնի շարունակութիւնն էր որ առանց իր կամքի, դուրս էր գալիս։

—Ա. Զատ չան, Զատի հէ է, ա Զա՜տ...

Զատին ճանաչեց այդ ձայնը. կուրծքը լցւեց, կոկորդը սղմւեց, ու արտասուքը հոսեց ինքն իրան նրա չոռած աչքերից։ Էն է, ուզում էր ձայն տալ, բերանը բաց արաւ ու ցնցւեց։ Գա՜յլ էր արդեօք որ ընկաւ նրա գիրկը։ Եւ մօրը պատասխանելու փոխարէն նա մի ճիչ արձակեց։

—Զալօ, օհ, քե մատաղ, Զալօ, բա Ծաղիկը, Ծաղիկը ո՞րտեղ ա, Զալօ...

Շունը խոտերը խըշխըշացնելով առաջ վազեց, նրա հետից Զատին։ Մի րոպէ, և նրանք կանգնած են որոճող Ծաղիկի մօտ։

—Ա. Զատ չան... նորից լսեց նա։

Զատի կրծքին ծանրացած քերծը վայրը ընկաւ ու նրա կուրծքը թեթևացաւ. վազեց, գրկեց Ծաղիկի գլուխը, իսկ Զալօն ընկաւ նրա խոխոը։ Զատին երկուսին էլ համ համբուրում էր, համ համբուրւում։ Այդ ժամանակ ճչալատն ձայնը, որ շրջապատի մթութեանը կորուստ էր յայտնում, նորից լսւեց.

—Զատի՛, հէ՛, ա Զատ, ա Զա՜տ, բալա՛ չան...

Մայրական ալէկոծ սրտից էր դուրս թռչում։

—Եկա՛յ, եկա՛յ, ա նա՛ն, Ծաղիկն էլ եմ բերում, եկա՛յ...

Զատին իր կեանքում այդչափ դեռ ուրախացած չէր։

Կարապետ Պալեան

Գ Ի Ն Ք Ա Կ Ա Ն Ի Դ Ի Լ Ի Ա .

Այս պատկերի ամենաաչքդ նկարագրողը, ոչ աւելի քան **ԱՂԲԻՒՐԻ** *3 երես, կը տառնայ ընծայ 25 գիրք եւ պատկեր: Ժամանակամիջոցը մինչեւ մարտի 30-ը:*

ՈՐՍՈՐԴ ԳԱԼՕ

(Ասանդուխին)

Շատ տարի առաջ հեռու սարերում մի մեծ կատաղի արջ էր թափառում. գիւղացիք հանգիստ, դադար չունէին ագահ, կատաղի գազանի ձեռքին։ Թէ անուշ մեղը, թէ հաս պտուղները, որչափ ուզէին, ողջը տանում էր։ Գիւղացիները խորհուրդ արեցին—թէ ինչպէս ջնջեն այդ անիծածին։ Մարդիկ ղրկեցին սաղ ու ձոր, անտառ, որ արջին գտնեն ու ջնջեն իսպառ։ Շատ չանք ղրեցին, շատ տեղ ման եկան, բայց այն ամեհի արջին չգտան։ Այդ անիծածը մարդկանց հոտն առել, ով գիտէ որտեղ լուռ թաք էր կացել—որ որսկանների ոտքն երբ կորչէր, նորից սկսէր նա իր օյիններն։ Բայց ահա նորից լսուեց մեծ հաւար, որ դղրդացրեց աշխարհը արար. «Վայ, արջը եկաւ, վայ, արջը տարաւ, ողջ փեթակները չարդեց ու փախաւ...»։ Մեր որսորդ Գալօն տեղից վեր թռաւ, սաստիկ կատաղած՝ հրացանն առաւ.—հրացանն առաւ, ընկաւ սար ու քար, շատ տեղ ման եկաւ, բայց արջը չըկար։ Գիւղից քիչ հեռու քարափ էր ցցուած, քարափի տակին չուր կար լճացած. մի քիչ էլ հեռու՝ կանգնած էր մի ծառ, որի տակ նստեց Գալօն ուժասպառ, նրա ըստուերում քիչ հանգստանայ ու յետոյ նորից իր գիւղը գընայ։ Յանկարծ քարափի մացառուտ ծայրից քարեր են

թափւում ջրի մէջ վերից։ Քարերը վերից շառաչով թափւում, շուրջը թնդացնում, հանգիստը խախտում, ու դղրդոցը հասցնելով երկին, սարսափեցնում էր ճահճի հաւքերին։ Վեր նայեց Գալօն, ճիաց քարացած։ Քարափի ծէրին երևաց մի արջ։ Դա մի գազան էր հսկայ մեծութեամբ. երևում էր, որ խիստ էր զբաղւած—ահագին քարեր նա գիրկը առած՝ ամենայն թափով գլորում էր ցած։ Ինքը վերևում, անվախ ներքևից, գլորում էր հա, քարեր գլորում, քարէ կարկտի տարափի տակում ինչոր նա մէկին թաղել էր ուզում։ «Ը՛... հը՛... վերջապէս... մուրազիս հասայ...», փսփսաց Գալօն, սեղմեց հրացանն, ուզեց կրակել, արջին սատկեցնել, բայց ուշքի եկաւ ու զրսպեց իրան—ո՛ւմ հետ է կուռում այդ ահեղ գազան, ո՛վ է ներքևում զայրացրել նրան։ Այս էր մտածում, երբ ճահճի մէջից յուզւած՝ դուրս թռաւ մի այլ մեծ գազան։ Դա մի վարազ էր, ուժեղ, ամեհի, ժանիքները մեծ՝ երկու թզանի։ Ախտուտած, ցեխոտ, աչքերն արնակոխ, տեսնողի սիրտը կանէր ահ ու դող։ Արջի վարմունքից զայրացած վարազ, քարափի ճամբէն բռնեց վազելազ։ Գալօն կրակել համարեց դեռ վազ, ուզեց նա տեսնել ինչ վերջ կունենայ այդ գազանների տարօրինակ խաղ։ Եւ մինչդեռ վարազ հևի հև տալով, վեր կը բարձրանար արջի հետքերով, խորամանկ արջը մեծ ծառ էր գտել, մի հատ դերան էլ վրան թեք դրել։ Հէնց որ վարազը եկնում էր ճահճից, մեր արջ պարոնը խկոյն երկիւղից թողած ամեն բան՝ դէպ ծառն էր վազում, դերանի վրով ծառը բարձրանում, վարազի վրայ թքում, վնթփնթում։ Հասնում էր վարազ, դէս ու դէն ընկնում, սուր ժանիքներով գետինն էր փորում, ծառին քանի մի հարւած էր տալիս, արջին չէր հասնում, նա խիստ բարձր էր. նորից քոռ, փոշման յետ էր ցած գալիս, մտնում էր ճահիճ, տիղմում լեղ տալիս։ Արջը իր հերթին հանգիստ չէր մընում—ծառից իջնում էր, քարերը առնում, նորից իր անհամ հանաքն էր սկսում։ Այդպէս մին, երկու թէ երեք անգամ երկու մեծ գազան անկեր անդադրում իրարու վրայ գրոհներ տւին։ Էլ չըհամբերեց մեր որսորդ Գալօն։ Եւ մինչդեռ արջը կըզբաղւէր խաղովն, գլուխք ինչ արաւ—հանդարտ ծլկւեց, քոլերի միջով ճանապարհ կըտրեց, մօտեցաւ ծառին, գերան վայր դրեց, արջի վերկուրծեան սանդուխքը քանդեց և ինքն էլ մօտիկ թփերում

ծածկւեց։ Մէկ էլ ինչ տեսնես՝ գլոր հա գլոր մեր արջն է վազում գլուխ կորցրած, վարագն էլ յետքից կառղած, գայլացած։ Արջը որ տեսաւ, գերանն է հանած, այնպէս պինդ գոռաց, այնպէս մռնչաց, որ սար ու անտառ թընդաց, դղրդաց։ Դէս ու դէն ընկաւ, շատ չպիշ եկաւ որ ծառն ի վեր ելնի, անկարող եղաւ։ Հէնց այդ ժամանակ կատաղած վարագ, աչքերը մթնած, ելաւ հաս քէ հաս։ Արջը օրհասին արդէն մօտեցած, երկթաթի վրայ բարձրացաւ, կանգնեց ու գիժ վարագին խաոել ուզեց, որ նրան սեղմի, տեղն ու տեղ խեղդի։ Այստեղ խենթ վարագ տարաւ ու բերեց, սուր ժանիքներով այնպէս մի տւեց, որ անմիտ արջի փորը դուրս թափեց, և խեղճը իսկոյն հոգին աւանդեց։ Դրան հետևեց թւանգի հարւած. վարագն էլ արջի հէնց կողքին փռւեց։ Այսպէս մեր ուսուա քաջ որսորդ Գալօն իր մի հարւածով երկու որս արեց, երկու գազանին ձեռաց պառկեցրեց, երկուսի մէյդն էլ միասին ձգեց։ Գիւղումն իմացան, վազեցին եկան, որսորդ Գալօին օգնութեան հասան—մէկը ձի բերեց, միւսը բերեց սայլը, շտապ-շտապով բարձեցին վրան ու մեծ հանդէսով դուզ գիւղը տարան։ Ինչ ուրախութիւն, ինչ մեծ ցնծութիւն. գիւղի լաճերն էլ սայլի առաջից որոխինդներ տալով, ուրախ վազեցին, ձեռաց հէնց ճանբին՝ երգ յօրինեցին, ձէն ձէնի տւին, երգել սկսան—«Արջն է գալիս թը՛փ, թը՛փ, հետն էլ վարագ խծփ, խծփ. արջն ու վարագ խծփ, թոփ, վազենք, թռչենք հօպ, հօպ...»։ Հէնց որ գիւղ հասան, սայլից իջեցրին, վառեցին կրակ, խոզը խանձեցին, արջի կաշին էլ մաքուր քերթեցին։ Կաշւիցը ամուր տրեխ կարեցին, վախուկ մազիցը երեխանց համար ձմեռւայ համար տաք-տաք գուլպա գործեցին։ Մսի մի մասը գիւղի աղքատին առատ ու առատ բաժին հանեցին. մնացած մասն էլ եփան, խորւեցին, ուրախ ու զւարթ կերան, խմեցին։ Նպէս որսորդները մենք շատ ունենանք, որ անվախ սրտով միշտ կռիւ մղեն, գիւղի բարիքը արջն ու վարագից ևայլ գազանից միշտ ազատ պահեն։

Գ. Ե. Մկրտումեանց

ԾԵՐՈՒԿ ՓՐԻՉԸ

Արդէն կէս գիշեր էր, բայց «Ծերուկ Փրիչը», Փրիդրիխ I թագաւորը, դեռ չէր քնել։

Վերջին ժամանակները նրան յաճախ թախիծ էր տիրում՝ առանց որևէ պատճառի։

—Երևի մահս մօտենում է...—շշնջաց Փրիդրիխը, և յանկարծ երկիւղը այնպէս տիրեց նրան, որ ցանկացաւ իսկոյն որևէ մէկին անպատճառ տեսնել իր մօտ, լսել որևէ մէկի ձայնը։

Նա արագութեամբ ձեռքն առաւ զանգակը և սկսեց նեարդային կերպով զանգահարել, որ հերթապահ պաժը (մանկլաւիկ) գայ։

Սակայն ոչոք ներս չէր գալիս։ Փրիդրիխը շունչը իրան քաշեց, սկսեց ականջ դնել ու ձեռքով շփել երեսը։

—Գուցէ ես քնած եմ,—շշնջաց նա,—կամ գուցէ արդէն մեռել եմ...

Նա նորից նեարդօրէն և երկարատև զանգահարեց, և նորից ոչ մի պատասխան։

«Ծերուկ Փրիչը» անքնքնքալով վերկացաւ բազկաթոռից և յենւելով ձեռնափայտին՝ առանձնասենեակից դուրս եկաւ ու մտաւ օրապահի սենեակը։

Եւ ինչ։ Սեղանի վրայ երկու վառ մոմ, իսկ սեղանի առաջ, բազկաթոռի վրայ նստած՝ օրապահ մանկլաւիկը քնել էր խոր ու առողջ մանկական քնով։ Սեղանի վրայ ընկած էր մի թուղթ, իսկ թղթի մօտ՝ գրիչ ու թանաքաման։

—Ես քեզ ցոյց կը տամ, ծոյլ անպիտան,—սրտնեղած ասաց թագաւորը, բայց յանկարծ սեղանի վրայ ընկած թուղթը գրաւեց նրա ուշադրութիւնը։ Դա մանկլա-

վիկի դեռ չվերջացրած նամակն էր, որ նա գրում էր իր մօրը։

«Սիրելի մայրիկ,—գրում էր մանկլաւիկը,—դուք շնորհակալութիւն էք յայտնում, որ ես փող եմ ուղարկում, բայց ուրիշ կերպ ինչպէս կարելի էր։ Դուք գիտէք, թէ ինչպէս ես սիրում եմ մեր «Ծերուկ Ֆրիցին», իսկ նա միշտ մի բան է կրկնում. «երախտամոռութիւնը—ամենասեւ, ատելի եւ ստորացուցիչ արատն է»... Դուք գիտէք, թէ նա ինչպէս զգայողաբար է վերաբերւում դէպի մարդկային թուլութիւնը, ինչպէս ամեն մի ճշմարտութիւն նա գնահատում ու յարգում է մարդու մէջ, իսկ երախտամոռութիւն նա տանել չի կար...»։

Ակներև է, որ այդ բառի վրայ մանուկը քնել էր։

—Ա՛յ թէ ինչ...—շշնջաց թագաւորը։—Է՛, իսկ այս ինչ է։ Քնած մանկլաւիկի գրպանից նա զգուշութեամբ հանեց մի տրորւած թուղթ։

«Շնորհակալ եմ քեզանից, իմ սիրելի կօնդաք, որ չես մոռանում քո Ծերունի մօրը և համարեա ամբողջ ռոճիկդ ուղարկում ես նրան։ Իսկ որ գրում ես, թէ աւազ սպանները հարկադրում են քեզ հերթից դուրս օրապահութիւն անելու, երեք գիշեր միմեանց վրայ, դու համբերիր։ «Ծերուկ Ֆրիցին» չըպիտի անհանգստացնել. նրան լաւ պահպանիր. նա մեզ համար շատ բան է արել։ Այդպէս ուրեմն։ Աստւած քեզ օրհնէ»...

Ֆրիդրիխը աչքերը շփեց ու կամաց վերադարձաւ իր առանձնասենեակը։

Նոյնիսկ այստեղ էլ անարդարութիւն է տիրում,—մտածում էր նա.—օրապահութիւնով խեղճ երեխայի հոգին հանում են... Բայց ինչպէս լաւ մարդ է... Ճշմարիտն ասած՝ շատ ափսոսում եմ...

Առանձնասենեակում նա ճարեց մի փաթեթ ոսկի դրամներով, դրեց նամակի մէջ և զգուշութեամբ դրեց մանկլաւիկի գրպանը...

Ապա վերադարձաւ առանձնասենեակը, վերցրեց դանգակը և այնպէս խիստ զանգահարեց, որ մանկլաւիկը վախեցած վեր թռաւ և նետուեց դէպի թագաւորը։

—Բայց, բարեկամ, դու շատ սլինդ էիր քնել,—ասաց Ֆրիդրիխը՝ նպատակով դէմքը խոժոռելով։

—Տէր... թոթովեց մանկլաւիկը։

Նա ձեռքը տարաւ դրպանը և յանկարծ քաթանի պէս գունատուեց ու լալով՝ ընկաւ թագաւորի ոտները։

—Ի՞նչ պատահեց,—հարցրեց Ֆրիդրիխը։

—Ձերդ մեծութիւն,—հազիւ կարողացաւ արցունքի միջով ասել մանկլաւիկը,—ինձ ուզում են կորստեան մատնել. ինձ վտուց ուզում են վռնդել այստեղից... Այս բանը... նպատակով են դրել իմ գրպանը, որ չեռոյ ասեն, թէ ես եմ դողացել ձերդ մեծութիւնից...

«Ձերդ մեծութիւն»...—ծաղրական ձևով ասաց Ֆրիդրիխը։—Նամակներում «ծերուկ Ֆրից» ես անւանում թագաւորին... Դէ, հիմա բաւական է։ Այդ փողերը ուղարկիր մօրդ, ինձանից բարևիր և հաւատացրու նրան, որ թոյլ չեմ տալ նրան կամ քեզ զրկեն կամ վիրաւորեն... Երևի ծանր է երեք օր միմեանց վրայ օրապահութիւն անելը, հա... Եւ թագաւորը խորամանկութեամբ աչքով արաւ նրան։

—Դու էլ պակասը չես, օրապահութիւն ես անում կանոնի հակառակ, ինքդ անճիշդ ես գտնւում, բայց «ծերուկ Ֆրից» քթիցն ես քաշում։

Եւ Ֆրիդրիխը իր խօսքին հաստատ մնաց. ապահովեց մօրը և մանկլաւիկ որդուն։ Ամենից առաջ նա մարդկանց սիրտն էր գնահատում և հովանաւորում էր այդպիսի մարդկանց։

Թարգմ. Ջ. Տ.-Գ.



ԷՍ ՕՐ ԷԼ ՄԹՆԵՑ...

(Հայ գիւղացու մրմունջներից)

Էս օր էլ մթնեց, երեկւայ նման
Կորաւ յաւիտեան,
Մի մազ չը փոխւեց՝ աւար ու խաւար
Մեր կեանքից թշւառ...

Էս օր էլ մթնեց, տարիներ անվերջ
Կեանքի կռւի մէջ
Մենք միշտ ճնշւինք աչքաթող ընկած
Անջուր ու անհաց:

Էս օր էլ մթնեց, մեր ցաւն ու մեր վէրք
Չը բուժւեց երբէք,
«Գարհիտակ» եղաւ մեր տունն ու տեղը,
Մեր շէնն ու գեղը...

Էս օր մթնեց, ձեր չանչին մատաղ,
Ա՛յ չիպարդան «խալխ»,
Ի՞նչ էք «տազ» արել, օխտը եադի պէս՝
Մտահանել մեզ...

Ե. Սդաբաք

Աղքատ մարդուն վերադարձը տանը.

Պատուհասի առաջ

Արմուշիկը վաղէվաղ իջաւ սանդուխքից։ Մայրը ուղարկում էր նրան խանութ, բայց երբ Արմուշիկն իջաւ բակ, տեսաւ չալ-հաւիկի թափառելը և կանգնեց։

Չալ-հաւիկը մի պատուհաս էր բակում. անքնակալ կկլի նման նա տեղ չունէր ձու ածելու, նա խոյս էր տալիս իրան համար պատրաստած բունկալից։ Արմուշիկը այժմ էլ տեսնելով հաւի թափառելը՝ ուզեց բռնել չալ-բբկաւորին և մայրիկի պատրաստած յատուկ բնի վրայ նստեցնել։

Արմուշիկը ուղղեց իր կլխարկը և բռնեց հաւի հետքը։

Բազում ճեճեւում էին հաւերը, ատիկ-տոտիկ էին անում բազերը, բայց ամենից հպարտ, ամենից փքուն վըչչում էր հնդկահաւը։

Արմուշիկը շտապ վազեց չալ-հաւիկի եռևից։ Նա չէր հեռացնում իր աչքը նրանից։

—Կը՛ո, կը՛ո, կը՛ո,—կըչկըչում էր հաւիկը և ամբողջ բակը ազմկահարում։

—Ի՞նչ ես կռկռում. մի ձու պիտի ածես և այսքան աղմուկ։

Բակի մի ծայրում խաղում էին երեխաները. նրանք թղթէ ազաւնիներ էին բայց թողնում. այնքան տարբեցան այս խաղով, որ չը նկատեցին նոյնիսկ Արմուշիկին։

Յանկարծ Արմուշիկը կանգնեց. նկատեց որ ցած է ընկել աչ ոտքի գուլպան. ուղղեց մի ակնթարթում, քիթը վեր քաշեց երկու անգամ և աչքից կորցրեց հաւիկին։

Այդ միջոցին նրա աչքն ընկաւ կուշ եկած կատուին։

—Ախ, այդ կատուն,—մտածեց Արմուշիկը,—նա էլի դարան է մտել և նշան դրել մի վտիտի վրայ։ Արմուշիկը մի թռիչք գործեց, քշեց կատուին և կրկին տեսաւ իր ոբոնած հաւին։

Զալ-հաւիկը մտել էր կոյանոցի եռեւ, այժմ դուրս էր գալիս այնտեղից։ Նրա թևը քսւեց կոյանոցի վերին շերտերին,—բայց բբկաւորը իրան չը կորցրեց, թռաւ և կանգնեց արկղի շրթերի վրայ։

—Ախ, անպիտան, ինչո՞ւ չես ուզում մի տեղում ձու ածել,—բացականչեց Արմուշիկը։

Ահա հաւը դուրս թռաւ, նոր ուժով կրկչաց, նորից վազեց, այս անգամ կոր գծով, մօտեցաւ աղաւնի խաղացող երեխաներին և իսկոյն յետ դարձաւ։

Երեխաները նրա առաջը կտրեցին և քշեցին դէպի Արմուշիկը։ Հաւն արդէն գլուխը կորցրեց, այս ու այն կողմն ընկաւ և ուժեղացրեց կըչկըչոցը։

—Կը-կը-կը,—թափ տւաւ թևերը աքաղաղը և մի մարմնացած ուշադրութիւն կտրւեց։

Սրան իսկոյն արձագանք տւաւ հնդկահաւը և, իջեցնելով գլուխը. վազեց խաղացող երեխաների կողմը, մի քանի րոպէ նայեց, նորից քիթը ուռցրեց, նորից փչւեց։

Արմուշիկը մի րոպէ նայեց հինդուհաւին, ծիծաղեց, յետոյ նորից ընկաւ հաւի եռևից։ Նա անցաւ պատի ցանկապատի մօտով, յետոյ շուռ եկաւ դէպի փայտանոցը։

Այստեղ, սրահի տակ կարող է մտնել հաւը և ձուն կորցնել,—մտածեց Արմուշիկը և մի նոր ոստիւն գործեց դէպի սրահը։

—Արմուշիկ, Արմուշիկ, դեռ այստեղ ես,—կանչեց մայրը պատշգամբից։—Շուտ դնա...

Արմուշիկը բարձրացրեց գլուխը և նորից կորցրեց հաւին։ Մայրը հասկացաւ որդու միտքը և չը կանչեց։

—Այնտեղ մտաւ, պարտիզի անկիւնը, շուտ արա,—ասաց մայրը,—ամենայարմար տեղն է... բռնի... էհ, ինչ տղայ ես, մի հաւ բռնել չես կարողանում։ Արմուշիկի ինքնասիրութիւնը շարժւեց, վազեց հասաւ պարտիզի անկիւնին, տարածեց երկու ձեռը և կտրեց հաւի առաջը։ Զալ-հաւիկը կանգնեց, մի փորձ արաւ թռչել վերև, բայց հէնց այդ ժամանակ ընկաւ Արմուշիկի դիրկը։

Հովհաննը յարմարեցրեց լոպէն, երբ մանուկը կուացաւ...

Արմուշիկը ամուր բռնեց հաւին և սեղմեց կրծքին։

—Չէ, այժմ չես փախչի...

Բայց հէնց այդ միջոցին ամբողջ բակը իրարանցման մէջ ընկաւ։

—Կը-կը-կը-կը-կը-կը... թռչկոտելով վրայ վազեց աքաղաղը, խիստ կատաղած, աչքերը պլշած... հաւերը յետ քաշւեցան... աքաղաղը փոթորկի նման յարձակւեցաւ Արմուշիկի վրայ հէնց այն րոպէին, երբ մանուկը կռացել էր և հաւին սղմել կրծքին։ Աքաղաղը նստեց Արմուշիկի մէջքին և կատաղի կերպով սկսեց կտցահարել մանկան գլուխը։

Արմուշիկի գլուխը ցած ընկաւ, և նա անսպասելի դէպքից յետոյ իրան բոլորովին կորցրեց։ Անցաւ մի քանի րոպէ. նա գլխի ընկաւ, բայց թողեց իր ղոհը, կանգնեց, երկու ձեռքով յետ մղեց կատաղած աքաղաղին և դառնապէս լաց եղաւ։

Իսկ աքաղաղը յաղթութեան գագաթնակէտին հասած, պարծենալով սկսեց հովանաւորել հաւին։

Բակի երեխաները թողեցին իրանց խաղը և ուշադրութիւնները կենդրոնացրին Արմուշիկի վրայ։ Յանկարծ նրանք սկսեցին ծիծաղել. լի, քրքջալից ծիծաղով։

Արմուշիկը ամօթից ուզեց յետ վազել, յետոյ կռացաւ, որ գլխարկը վերցնէ, բայց... այդ միջոցին նոր պատուհաս եկաւ նրա գլխին։

Հնդկահաւը տեսնելով Արմուշիկի պարտութիւնը, յարմարեցրեց րոպէն և հէնց այն ժամանակ, երբ մանուկը կռացաւ, կամթեց նրա ձախ ոտքից և հպարտ-հպարտ արձանացաւ մի կողմ քաշւած։

—Օ՛յ, օյ, —ճղճղաց Արմուշիկը, ծածկելով իր գլուխը։ Դարձեալ ծիծաղ, այս անգամ աւելի ուժգին։

—Ի՞նչ էք ծիծաղում,—նեղացաւ Արմուշը։ Բայց տղաները աւելի ծիծաղեցին։ Արմուշիկը մօտեցաւ սանդուխքին, նստեց շէմքի վրայ և սկսեց շփել ոտների սրունքը։

Հաւերը վազվզեցին, չալ հաւիկը թաք կացաւ, իսկ

աքաղաղը չը հեռացաւ իր դիրքից։ Արմուշիկը այլևս չէր նայում հաւերին։ Նա վիրաւորւած էր ընկերներից։

—Եկ, խաղանք,—ասացին նրանք։ Բայց Արմուշիկը չը պատասխանեց։ Նա սրտում խոր վիրաւորանք զգաց։ Ընկերները քիչ է որ օգնութեան չեկան, այլև ծիծաղեցին։

Խաղացողներից մէկը կոացաւ, որ վերցնէ իր թղթէ ադաւնին, հէնց այդ միջոցին հնդկահաւը բռնեց նրա գլխի մազերից։ Նոր ծիծաղ, նոր իրարանցում։ Այդ ընկերը ամենից շատ ծիծաղողն էր Արմուշիկի վրայ։ Նա վիրաւորանքի խիստ դող զգաց, վերցրեց մի քար և բաց թողեց հնդկահաւի վրայ։ Քարը չը դիպաւ, հնդկահաւը աւելի զայրացաւ։ Այդ նոր դէպքը փոխեց Արմուշիկի տրամադրութիւնը. նրա սրտից դուրս եկաւ բարկութիւնը. քիչ ճնաց որ այժմ ինքը ծիծաղէ։

Բոլորը սկսեցին ծիծաղել։ Հնդկահաւը երեխաների ձայների վրայ աւելի աղմկահարեց։

—Եկ, եկ, խաղանք,—ասացին ընկերները Արմուշիկին։

Մէկը մօտեցաւ, վերցրեց նրա ձեռքից։

—Տես, ինչ հրաշալի է թռչում իմ ադաւնին։

Արմուշիկը մոռացաւ վիրաւորանքը, շարժւեց տեղից։

—Այս րոպէին, գնամ նախ մայրիկի համար իւղ առնեմ, գամ յետոյ... Եւ Արմուշիկը վազեց դէպի դարպասը։

—Ղը՛ռ-ղը՛ռ-ղը՛ռ,—գոռգոռաց հնդկահաւը, գլուխը ուղղած գետնին, վազեց նորից Արմուշիկի եռևից։

—Դա պատուհաս դարձաւ մեր դէմին,—ասացին ընկերները հալածելով հնդկահաւին։

Այս անգամ նրանք այլևս չը ծիծաղեցին։

Գ. Սօլօվեան

ԴԱՄՈԿԼԵՍԱՆ ՍՈՒՐ

(Պատմական ակնարկություն)

Գարեը առաջ Սիրակուզում իշխում էր մի ընտատը,
Դիոնիս էր նրա անուն, նախկին անյայտ մի զինուոր:
Նա ապրում էր իր դղեակում՝ գիշեր ցերեկ սնարեկ,
Ընդհարանը յաճախ փոխում, հանգիստ չունէը նա երբէք:
Հրպարտ, ագահ ու ընչաւէր, արիւնարբու մի գազան,
Նա գութ ու խիղճ քնաւ չունէը, թըշնամի էր մարդկութեան:
Ով անց կենաը նրա մօտով, թէ մերձաւոը թէ օտար,
Հրամայում էր թիկնապահին, որ հուզարկէը անպատճառ:
Տունը լի էր, բայց գանձերը նա դիզել էր արիւնով,
Անմեղների գլուխները սուր ու թըրի անցնելով:
Նա տանջում էր ոտիններին խոնաւ ու մութ բանտերում
Կամ յանձնում էր դահիճներին, խաչի վըրայ բեւեռում:
Լըրտեսում էր ամենայն տեղ՝ քաղնիներում, հանքերում
Ու իր դատըն աիւնահեղ անմիջապէս կատարում:
Չէր հաւատում ընկաւ մարդուն, չունէը ընկեր-բարեկամ,
Կասկածում էր նոյնիսկ որդուն եւ հարազատ աղջկան:

Երբ Դիոնիս մի օր ծրպտի նստած էր մի պանդոկում,
Այնտեղ տեսաւ իր ծանօթին, որ Դամոկլէս էր կոչւում:
Ընկերներով շրջապատած, գինու թասի առաջին,
Նա զովում էր, փառաբանում Սիրակուզի տիրանին:
Դիոնիսը լսում էր այդ եւ ցընծում էր հոգեպէս,
Իր մտքումը նա կրկնում էր. «Կեցցէ, կեցցէ, Դամոկլէս»:
Դամոկլէսին նա համարեց իր բարեկամ մեծերիմ,
Լիածեռն վարձատրըեց եւ դարձրեց իր սիրելին:
Տարաւ նըրան իր ճոխ պալատ, գահի վըրայ բազմեցրեց
Եւ մեծ շուքով արքայական բարեկամին զարդարեց:
Դամոկլէսի բախտը սակայն պիտի լինէը կարճատեւ,
Գուցէ մի օր, մի ժամ միայն փայլելու էր նրա արեւ:
Եւ արդարեւ, երբ նա յանկարծ աչքը դարձրեց ղէպի վեր,
Գըլխի վերեւ տեսաւ կախած մազից բարակ մի սուսեր,
Որ սպառնում էր ամեն րոպէ, ամեն վայրկեան կըտրըել
Եւ Դամոկլի ուղեղի մէջ, ինչպէս սըլաք, թափանցել:
Ու սըրտատրոփ ցաւ իջնելով արքայական գահոյքից,
Նա հրաժարուեց պատիւներից եւ փառահեղ պըրսակից:

Լեւոն Մանուէլեան

ՖՐԻԴՐԻԽ ՇՕՊԷՆ

Ջշանաւոր երաժշտագէտներից ոչ մէկը գուցէ չէ բռնում այնպիսի բացառիկ տեղ երաժշտական արուեստի մէջ, ինչպէս այդ հանճարեղ լեհացի կոմպոզիտորը, որը ծնուել է սրանից հարիւր մէկ տարի առաջ—1809 թւի փետրուարի 16-ին (մարտի 1 ն.տ.) Վարշաւայի մօտ գտնուած Ժելեազօա Վօլեա գիւղում և վախճանուել սրանից վաթսունմէկ տարի առաջ։ Նրա հայրը ֆրանսիացի էր, իսկ մայրը—լեհուհի. նա երկար տարիներ կանոնաւոր երաժշտական կրթութիւն սւացաւ նշանաւոր գերմանացի պրօֆեսորի ձեռքի տակ։

Նրա հայրը դաստիարակ էր մի արիստօկրատ ընտանիքում և իր համեստ եկամուտով հազիւ էր կարողանում ընտանիք պահել։ Այդ թոյլ, հիւանդոտ երեխան չէր ցոյց տալիս ոչ երաժշտական, ոչ էլ մի որևէ այլ ընդունակութիւն. սակայն դա արգելք չեղաւ նրա ծնողներին յանձնել իրանց երեխային մի հին չեխ-ուսուցչի (Zewny), գերմանական կլասիկների (Բախի հայրն) ջերմ երկրպագուին, սովորեցնելու նրան նուագել դաշնամուրի վրայ։

Մի քանի տարուց յետոյ պատանի Շօպէնը առիթ ունեցաւ նուագելու իշխան Անտօն Րադզիվիլլի ներկայութեան. իր ժամանակի այդ յայտնի մարդը հիացաւ նրա թեթև, բանաստեղծական, գրաւիչ նուագով, նրա բնածին համեստութեամբ, գեղեցիկ արտաքինով և իշխանը իր հովանաւորութեան տակ առնելով նրան՝ իր հաշուով տեղաւորեց նրան Վարշաւայի լաւագոյն ուսումնարաններից մէկում և մըտցրեց նրան լեհ բարձրադիր հասարակութեան շրջանը, որտեղ այդ պատանին շուտով դարձաւ ամենքի սիրելին։ Նրա յաջողութեանը նպաստում էին թէ իր մեղմ, ուրախ ու սիրալիր բնաւորութիւնը, թէ գրաւիչ արտաքինը իր խելացի, կապտագոյն աչքերով, դէմքի քնքոյշ և պայծառ գոյնով ու շէկ, գանգուր մազերով, թէ նրա սրամիտ, քաղցրաձայն խօսակցութիւնը և թէ մանաւանդ արտայայտիչ և ազդու նուագումը։

Տասն և վեց տարեկան հասակում Ֆրիդրիխ Շօպէնը ընդհատեց դաշնամուրի դասերը և շարունակում էր կատարելագործուել առանց ուսուցչի, մինչդոյն ժամանակ սկսեց եռանդով պարապել երաժշտագիտութեան, թէօրիայով, Վարշաւայի կօնսերւատօրիայի տեսուչ Էլիհների ղեկավարութեամբ։ 3—4 տարւայ ընթացքում նա բաւականին իւրացրեց երաժշտութեան տեխնիկան և յետոյ մի ճանապարհորդութիւն կատարեց դէպի Բերլին, Դրէզդէն, Պրագա և Վիէննա, որով հնարաւորութիւն ունե-

ցաւ մօտիկից ծանօթանալու այն ժամանակւայ հմուտ երաժիշտնե-րի նւագներին և միևնոյն ժամա-նակ բեմ դուրս գալ աւելի բազ-մամարդ և բանիմաց հասարակու-թեան առաջ, որը միանգամից գնահատեց նրա նւագի և նրա հե-ղինակութիւնների բազմաթիւ ար-ժանիքները։

1830 թւի վերջին ապստամ-բեց Լեհաստանը։ Մի տարուց յետոյ ճնշուեց այդ ապստամբու-թիւնը, ազգովին ակնների—հայրե-նիքի այդ լաւագոյն որդիների—խմբերը ստիպուեցան փրկութիւն որոնել օտարութեան մէջ։ Նրանց թւումն էր և Ֆրիդրիխ Շօպէնը, որը փախուստ տւեց յաղթողնե-րի յետապնդումից և մտածում էր բնակութիւն հաստատել Լօն-դօնում, սակայն շատ լեհացի ա-րիստոկրատ ընտանիքների հետ միասին մնաց Պարիզում, որտեղ անցկացրեց համարեա իր ամբողջ կեանքը, լինելով տաղանդաւոր գրողների, արտիստների և երա-ժիշտների շրջանում, որոնցից յայտնի էին Հէյնէն, Միցկևիչը, Ժ. Զանդը, Լիստը, Մէյերբերը, Շումանը և Մենդելսոնը ու իր նշանաւոր հայրենակիցները—իշ-խաններ Պատօցկինները, Զերտօ-րիժսկինները, Լիւբօմիրսկինները։

Այն ժամանակւայ նշանաւոր երաժշտագէտները—Ֆիլդը և Կալ-կբրեններ անւանեցին Շօպէնին «հիւանդանոցի տաղանդ և մա-տերը անկանոն գործ ածող պի-անիստ», որ սակայն արգելք չե-դաւ արւեստի այն ժամանակւայ պարագլուխներին խոնարհւել այդ երիտասարդի հանճարի առաջ։ Նրա թոքերի հիւանդութեան տա-րեցտարի սաստկանալը ստիպում էր նրան խոյս տալ մարդկանց հասարակութիւնից, առանձնա-նալ. նա սկսում էր միշտ աւելի ու աւելի հեռու պահել իրան երա-ժիշտների աղմկալից համախմբ-րումներից և ժամանակն անց էր կացնում լեհ արիստոկրատիայի իր մտերիմ շրջանում և իր բազ-մաթիւ աշակերտների ու աշա-կերտուհիների հետ, որոնցից մի քանիսը շնորհիւ իրանց աչքի ընկնող ընդունակութիւնների վա-յելում էին ուսուցչի առանձին համակրանքը։ 1837 թւին հիւան-դութիւնն այնքան սուր կերպա-րանք ստացաւ, որ բժիշկների խորհրդով Շօպէնն ստիպւած ե-ղաւ տեղափոխւել Մայօրկա կղզ-ին, և այստեղ միայնութեան մէջ, սիրած կնոջ (Ժօրժ Զանդի) մօտ անցկացնել մօտ երեք տա-րի։ Այդ կենակցութիւնը շարու-նակւեց եօթ տարի ևս Պարիզում և այնքան անտանելի դարձաւ իր աղմկայոյզ տեսարաններով, որ սարքում էր նրա կինը—հռչակա-ւոր գրողը—որ 1847 թւին Շօ-պէնը բաժանւեց նրանից և գը-նաց ճանապարհորդելու Անգլիա և Շօտլանդիա. բայց արդէն մի տարուց յետոյ էլ ընդմիշտ ան-կողին մտաւ. նրան սկսեց խնա-մել իր քոյրը, որը ևկել էր վար-շաւայից անյուսալի հիւանդ կօմ-պօզիտօրի մօտ։

1849 թւի հոկտ. 18/38 Մադ-

լէնի եկեղեցին տարաւ Շոպէնի դագաղը։ Նրա վերջին ցանկութեան համեմատ թաղման արարողութեան ժամանակ երգուեց Մօցարտի—որին նա պաշտում էր—հեղինակութիւնից և իր Շոպէնի կազմած թաղման մարշը, որը և կատարում էին հռչակաւոր Լաբլաշը և Պօլինա Վիարդօն։ Նա թաղուած է Père Lachaise դերեզմանատանը, իսկ այժմ պատրաստութիւններ են տեսնւում տեփոխելու նրա աճիւնը Վարշաւա և արձան կանգնեցնելու նրա վրայ։

—

Համարեա իր բոլոր ստեղծագործութիւնները Շոպէնը գրել է միմիայն դաշնամուրի համար. նրանց վերնագիրները — էտիւդ, վալս, մազուրկա և այլն—այնպէս պարզ և հասարակ են, որ ոչինչ կամ շատ քիչ բան են արտայայտում, այնպէս որ մինչև Շոպէնի երևալը ոչոք չէր էլ մտածի այդպիսի պարզ վերնագիրների տակ փնտռել այն անսահման խոր բովանդակութիւնը, այն անթիւ վառ գոյները, որ առաջին անգամ տուեց մեզ նրա մուզան։

Գիշատուած հայրենիքի կարօտը հնչում է նրա համարեա ամեն մի տողից. դա հնչում է նրա չորս բալլադների մէջ, որոնք երբեմն խորհրդաւոր են, երբեմն քնքոյշ, գգուող, երբեմն յուսահատ հառաչող. նա լսւում է նրա յիսուն մազուրկաների մէջ, նա ծորում է նրա 14 վալսերից, և այլն, և այլն։

Սակայն նա ազգային վշտի երգիչ չէ միայն. Շոպէնի մուզայի աւելի դերազանց կողմը կազմում է համաշխարհային, հասարակական, ընդհանրական վիշտը, նման բայրօնեան Weltschmerz-ին բայց արտայայտուած նուրբ, գեղեցիկ, եթերային ձայնագծերով։

Լինելով Զայկովսկու և Վագների նման երկրպագու Մօցարտին, այդ նշանաւոր լեհացի կոմպօզիտօրը ներկայանում է իբրև Բէթհովէնի տաղանդաւոր յետևորդներից մէկը, իբրև մի խորին բոմանտիկ, որ անսահման չափով զարգացրել է Բէթհովէնի դերակշռող տրամադրութիւններից մէկը։ Շոպէնն անուանեց այդ տրամադրութիւնը—Zal (ափսոս), սակայն Լեհաստանի նախկին մեծութեան անկման մասին եղած ափսոսանքը նրա մէջ դառնում է իբրև մի նախադուռ դէպի համաշխարհային վիշտը, մարդկութեան անմխիթար տպագայի և անցեալի tempi passati մասին...

Վ. Մտասովը անալիզի ենթարկելով Շոպէնի մի քանի հեղինակութիւնները, գտել է նրանց մէջ ասիական կամ արևելեան էլէմենտները. դրանք այնքան սովորական են նրանց մէջ և պայծառ, որ հաւանականօրէն իրանց վրայ կը դարձնեն հետազօտողների ուշադրութիւնը, և գուցէ կը պարզւի արևելքի և արևմուտքի այն սերտ, օրգանական կապը, որ նկատւում է լեհացի այդ հանճարեղ կոմպօզիտօրի ստեղծագործութիւնների մէջ։

Վ. Գ. Ղորղանեան

Մանկական աշխարհ

II տարի Պատկերազարդ զաւրաբ ամսաթերթ II տարի

1910 թ. № 2

Հրատարակւում է մանանակցութեամբ ժրաչան աշակերտուհիների եւ աշակերտների

Խմբագիր-հրատարակիչ ԱՄՔԻԿ

Աշակերտ I դասարանի ՍՕՎԱՍԻՆԱՅԻ ուսումնարանից

ՓԵՏՐՈՒԱՐ

ԱՅՍՊԷՍ ԱՆԿԱՐԵԼԻ Է

Ընկերներ! Սիրելի աշխատակիցներ, մենք բանալով Մանկական Աշխարհի զաւրթ էջերը ձեզ համար, ենթադրում էինք որ դուք նկատի կունենաք նրա սուղ էջերը։ Իսկ դուք հարիւրներով էք ուղարկում ոտանաւորներ, յօդւածներ և նամակներ։

Զեզանից ոչ-ոք չէ նկարագրում այն քաղաքը, գիւղը, ուր ինքն է ապրում, այլ բանաստեղծութիւններ է անում։ Յայտնում ենք, որ չենք կարող տպագրել Մանկ. Աշխարհում, մի յօդւած, եթէ պօսո մի թղթի երկու երեսից աւելի լինի գրւածը։

Յօդւածները տպագրւի թէ չէ, յետ չեն վերադարձւում։

Ամքիկ

Ա Ն Ի

Անին է մեծ մայրաքաղաք, Բագրատունեաց մի շէն քաղաք. կիսակործան պարիսպներով կանգնած է դեռ բեկորներով։

Ախուրեանը իրա գետով՝ Գլիձորը իրա ծայրով, պահպանում են մեր որբ Անին, սարսուռ ազդում այցելուին։

Մինչև հիմա նա կանգուն է, Ախուրեանը դեռ ողբում է, բայց հայ ազգը խոր քնած է. ե՞րբ նա Անին կը նորոգէ...

Էեւոն Տէր-Յակովբեան

Ղարսի քաղաք. ուսումն. աշակերտ։



Ա.Ճի. Մայր եկեղեցի

ՄԱՐԴՈՒ ԿԵԱՆՔԸ

Մարդու կեանքը նման է տարւայ չորս եղանակներին.

I. *Երեխան ծնւում է մօրից. նա դեռ չի հասկանում ոչինչ, չի կարող խօսել. նա սկսում է աճել, զօրանալ, հետզհետէ խօսել և քայլել. նա այդ ժամանակ նման է գարնան։*

II. *Անցնում են շատ տարիներ. նա առնում է իր հասակը և դառնում է կատարեալ մարդ. նա՝ արդէն հասկանում է չարն ու բարին, լաւն ու վատը, բարեկամն ու թշնամին. նրա աշխատանքի ամենաթունդ ժամանակն է, կեանքի վերին աստիճանի գեղեցիկ վայրկեանն է. նա այդ ժամանակ նման է ամառւան։*

III. *Ահա և մի երկու տասնեակ տարի էլ անցաւ. նա սկսում է օրէցօր ծուլանալ և արդէն ցոյց է տալիս և ուժի պակասութիւն. նա առաջւայ նման չի կարող աշխատել. նա արդէն նման է աշնան։*

IV. *Տեսնում ես՝ այն տունը, որտեղ ապրում էին միայն երեքչորս անձինք, հիմա դառել են տասերեք-տասնչորս. որոնում ես այն երեխային, որին տեսել էիր փոքր հասակում, որի հետ խաղում էիր. նա արդէն ունի որդիք, թոռներ, նրա մազերը սպիտակել են որպէս ձիւն, որ նման է ձմեռան։*

Յովհ. Ղարապետեան

Ղարսի քաղաք. ուսումն. աշակերտ։

ԲԱՂՏՈՒ

Ես ու բաղդս լուռ ու խոժոռ՝ գնում էինք ճանապարհ, և յիշելով վիշտս խոշոր, հարցնում էի անդադար.

—Աւա՛, ա՛յ բաղդ, ո՞ւր ես տանում, դէպի կորո՞ւստ, թէ՞ հըրճւանք. ծովի՞ անդո՞ւնդ, դէպի կրա՞կ, թէ՞ դէպ անվերջ խուլ տանջանք։

Լո՛ւռ էր բաղդս, ինձ չէր նայում, կարծէք՝ խորշում էր ինձնից. սակայն նրա չար աչքերում տեսայ թակարդ դէպի ինձ։

Համբարձում Մազմանեան

Մեծ-Ղարաքիլ. պետ. դպր. V-րդ բաժ. աշակերտ

ՄԵՐ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

Շուշի, 9 յունուարի

Հրաշափառ ձմեռ է այս տարի. պայծառ օրեր, շատ արև և հետն էլ կէս արշին կիտած ձիւն: Օ՜հ, ինչ հիանալի է. սահում ենք սահնակներով: Ձիւնից էլ ինչքա՜ր ասէք, որ չենք շինում—քարտէզներ, կամուրջներ, արձաններ, բուրգեր:

Ի՞նչպէս էք հաւանում ձիւնից այս պատկերը. հաւատացէք այս պատկերի նոյնութեամբ էլ արձան շինել էինք բուլուարումը:

Շուտով կատարելու է Գաբրիէլ վարժապետի յօբելեանը և երևի յետոյ ուրիշ, նոյնպէս մեր քաղաքի վրայ երախտիք ունեցող մի վարժուհու և մի արւեստագէտի յօբելեանները:

Աւօ

Նամակ խմբագրին

Բագու, 3 փետրուարի:

Ստանալով անցեալ օրը Աղբիւրի 1-ին համարը, շատ զարմացայ. ինչո՞ւ իմ գրւածքս չը կայ: Ես ձեզ հաղորդել եմ անցեալ տարւայ դեկտեմբերին Փոքրիկ քաղերար վերնագրի տակ: Նամակումս խնդրել էի տպագրել, բայց ըոլորը իզուր անցաւ: Ձեմ իմանում, կարելի է փետրուարեան համարումն էք տպագրելու. Աստուած տայ տպագրէք, բայց խնդրում եմ, եթէ չէք տպագրելու, յետ ուղարկեցէք, կարելի է ես կուղղեմ և կը վոխեմ:

Այստեղ մի աշակերտ ուզում է ստանալ ս. Սահակի և ս. Մեսրոպի պատկերը. նա ինձ խնդրեց ձեզանից իմանալ որքանով կարելի է ձեռք բերել:

Ես պատրաստում էի մի նոր գրւած Ցարազի համար, կէսն արդէն պատրաստ է. երէկ ստացայ Աղբիւրը և այնտեղ չը կայ իմ գրւածքս. ուզղակի գրէՀը չի հպատակւում ինձ, զօռով մի ևրկս էլ գրել եմ: Հիմա էլ չեմ կարողանում հանգիստ բանից լինեմ: Հէնց ուզում եմ թէ մի բան անեմ, իսկոյն միտս է ընկնում իմ անդրանիկ մանկական գրւածքը, և ես ծնում եմ շտապած և սիրտս կոտրած:

Մնամ «Մանկ. Աշխ.» աշխ. աշակերտ

Ռուբէն

ՊՕՍՏԱՐԿՂ

Բազու, Ռուք. Մուս.—Հազարից աւելի յօդուած, ոտանաւոր ենք ստացել Մանկ. Աշխ. տպագրելու համար։ Ձեզ ենք հարցնում, եթէ բոլոր այդ 1000 յօդուածներն էլ շատ ընտիր, տպագրութեան յարմար լինէին, կարո՞ղ ենք բոլորը միանգամից տպագրել։ Իսկ եթէ ոչ, այն ժամանակ մի զայրանաք մեզ վրայ։ Ձանազեք, որ Մանկ. Աշխարհը մեծանայ տասն անգամ աւելի քան այժմ։ Իսկ այդ կարող է լինել միայն այն ժամանակ, երբ ամեն աշակերտուհի և աշակերտ առանց բացառութեան Աղբիւր ստանայ։

ՀԱՆԵԼՈՒԿ

Առաջ. Ծով. Կար.

Թէ շանթում է կայծակը երկնքում,
Թէ երգում է սոխակը անտառում,
Թէ վըշվըշում է ջուրը ձորակում,
Թէ հովւի սրինգն է զըւարթում—
Նա նորից է ծնում
Եւ նոյնը կրկնում։

—

ՄԵՐ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ

Հաճա եկէք, Գիսակ, Սիրան,
Ու խելօք Սուրէն, Ռուբէն,
Կամ թէ՝ հէնց դուռ, այ Գարեգին,
Սիրուն Արփիկ, Կահիկ անգին,—
Տեսնեմ, կարո՞ղ էք դանել դուք
Այս մէկ հեշտիկ իմ հանելուկ։
Մէկ բառ գիտեմ երկվանկանի,
Երկրագործին շատ պիտանի,
Առանց նրան նա չի ապրի,
Թէկուզ հէնց մի, կէնտ մի՛ տարի։
Տարէնը՝ մէկ, երկու անգամ
Պատիկն առնս, թէ մեծը տան,
Աղգականները, թէկուզ խնամի
Նրա հետ միասին կերթան բանի։
Բացի դրանցից, անմիջապէս
Բանում են և գոմէշ ու եզ,—
Բառս երկրորդ վանկն ասէք,
Ձեզ մօտ լինի՝ հացով կուտէք։

Ե. Սդաբաք

ՆԱԻԱՍՏԻ ՇՈՒՆ

ԱՂԲԻՒՐԻ ՊԱՏՄԱԽՈՍՆԵՐ

Ն. Նախ. Թեմ. Դպր. Ինչպէս երևում է, տեղիդ պօստատան ցըրւիչները շատ են հաւանել Աղբիւրը որ ոչ ձեզ են յանձնել № 1 և ոչ Գոգոյեան ուսումնարանին։ Երկուսիդ էլ կրկին ուղարկւեց, սակայն, խնդրում ենք, ինքներդ հսկէք և խստութեամբ պահանջէք համարները ձեր պօստատունից։

Դանձակ. Կ. Բ. Սպասում ենք ձեր նամակին։ Աղբիւրը յոյս ունի՝ իր գեանքն ու հրճւանքը ձեզ նոյնպէս կը ներշնչէ վստահութիւն խիղախ ընթանալու ուղիղ շաւղով, թէև փշալից ու լի զրկանքներով, տանջանքներով, դէպի ընդարձակ ասպարէզ։

Ախալք. Տիկ. Բիւրեղ. Ուրախութեամբ կարող ենք հաղորդել որ Աղբիւրի հետ և Տարազն ու Առողջապահն էլ շատ խուլ անկիւններ են մտնում։ Եթէ Աղբիւրի յունւարի համարը անցեալ տարւայ չափ լինէինք տպագրած, արդէն փետրւարի սկզբին տպառած կը լինէր։ Տարազը տպագրւել էր 1050 օր., իսկ այժմ միայն 168 օր. ու բաժանորդագրութիւնը շարունակւում է դեռ շատ աջող։

Տպառած է **ԱՂԲԻՒՐԻ** ներկայ տարւայ յունւարի № 1-ը։ Մնում է ընդամենը 72 օրինակ № 1-ից, որ կուղարկւեն Աղբիւր-Տարազ միւնոյն հասցէով առաջուց բաժանորդներին։ Գալոցական աշակերտներին այդ № 1-ի փոխարէն կուղարկւեն երկու գիրք

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԻՑ

ՎԵՐՋՆԱԿԱՆԱՊԷՍ ՅԱՅՏԱՐԱՐՈՒՄ ԵՆՔ՝

Իւրաքանչիւր բողոք Աղբիւրի կամ Տարազի մի որևէ № չստանալու մասին՝ բաժանորդը պէտք է դիմէ իր քաղաքի պօստատանը գրաւոր և իր այդ բողոքը պօստատունից վաւերացրած պէտք է ուղարկել մեզ։ Հակառակ դէպքում բողոքը կը մնայ մեր կողմից անուշադիր։

Թիֆլիսի պօստատանը մենք Աղբիւրի թէ Տարազի համարները յանձնում ենք ցուցակով և ստանում ընկալագիր։

Թիֆլիսի պօստատանը ոչ մի կերպ չեն կարող կորչել համարները։

Աղբիւրի Ակունքը ստանձին տեղերով է լոյս տեսնելու և կուղարկւի բաժանորդներին Աղբիւրի հետևեալ համարի հետ։

Ուղարկւում է Աղբիւր-Տարազ և Աղբիւր-Ակունք ստացող բաժանորդներին ներկայ համարի հետ վաղորդանաց գլաստերազի մեծագիր պատկերը։ Գեղեցիկ երէցը օրհնում է Հայրենեաց Վարդանի ս. Դրօշակը։ Միայն Աղբիւր ստացող աշակերտները կարող են այդ պատկերն ստանալ, վճարելով, ճանապարհածախսով և յատուկ խողովակների մէջ 25 կ., պատկերը ծալած, առանց խողովակների՝ 20 կ.։ Ներսից, որոնք բաժանորդ չեն Աղբիւրին կամ Տարազին, վճարում են 50 կ.

Յարմար է, որ դպրոցական աշակերտները միանգամից մի կտրոցով ստանան 25-ական հատ։ Այս դէպքում, պատկերները կը ստանան մի ընդհանուր խողովակում և փոխանակ 25 հատին վճարելու 6 ր. 25 կ., պիտի վճարեն 5 ր., հաշւելով հատը 20 կ.

ԱՂԲԻՒՐ եւ ՏԱՐԱԶ

XXVIII ՏԱՐԻ — XXI ՏԱՐԻ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍՆԵՐ

Հրատարակւում են ամէն, բազմաբովանդակ, մանանակցութեամբ մեր և եւրոպական ամենայատնի դրականագէտների, հրապարակախօսների, լրագրողների, արուեստագէտների և դերագէտների։ Տարեկան բաժանորդագինը 10 ր. դպրոցների, գրադարանների, հասարակութիւնների համար, իսկ ազգային աշակերտ ունեցող ընտանիքներին 5 ր։ Բաժանորդները վճարելով 5 ր. ներկայ տարւայ ընթացքում ստանում են որպէս պրեմիաներ ԹԷ ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ բոլոր յաւելւածները, ԹԷ հայ յայտնի դէմքերի և տեղերի պատկերները և ԹԷ գեղանի օրացոյց 1911 թ.։

ԱՊԱՌԻԿ ԿԱՄ ՄԱՍ-ՄԱՍ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԻ ԸՆԴՈՒՆԻՒՄ

Աղբիւր-Տարազ ամիսը 33 կոպէկ։

Հասցէն՝ Тифлис, Редакція „Агбюр-Тараз“.
Tiflis, Direction „Agbur-Taraz“.

ԲԱՐԵԿԵՆԴԱՆԱՑԻՆ ՆԻՒԷՐ

Լոյս տեսաւ 3-րդ հրատարակութեամբ

ՎԱՐԴԱՆ ՋՕՐԱՎԱՐԻ

Ս. ԴՐՕՇԱԿԸ ՕՐՀՆՈՒՄ Է ՂԵՒՈՆԴ ԵՐԷՑ

դունաւոր մեծադիր (70×50 սանտ.) պատկեր։

ԳԻՆԸ 50 ԿՕՊ.

Վերադիր վճարով և ապառիկ պատուէր չէ ընդունուում։

ԹԻՖԼԻՍՈՒՄ *հինգշաբթի, հայոց ներկայացումների համար տոմսակ ունեցողները կարող են մինչև մեծ-պասի երկուշաբթի առ. 12 ժ. ներկայացնել ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ խմբագրութեան դրասենեակը հայոց ներկայացման իրանց տոմսակը և ստանալ «Վարդան զօրավարի սուրբ դիջակը օրհնում է Ղևոնդ Երէցը» պատկերը, վճարելով 20 կ. վոխարէն 50 կոպէկի։ Երկուշաբթի, ժամի 12-ից յետոյ ամենքի համար հասը 50 կոպէկ։ Գաւառներից դիմել՝*

Тифлис, Бюро Печати. Мадатовская, 5.